ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

ք.Ստեփանակերտ, Թումանյան փող.62, ☎ 047-94-19-35, 047-97-71-19, fax 047-97-15-37,
e-mail: kgn.nkr@mail.ru, kgn@ktsurf.net, www.edu.nkr.am

N 01-850 «25» սեպտեմբերի 2012 թ.

«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
տնօրեն պարոն Ա.Բլեյանին

Հարգելի պարոն Բլեյան

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ Արցախի և արցախցիների նկատմամբ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքի համար: Դրա հերթական ապացույցը եղավ «Հայ ասպետ» հեռուստախաղին մասնակցելու համար Երևան հրավիրված Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 և Մարտակերտի Վ.Բալայանի անվան հոսքային դպրոցների թիմերի հյուրընկալումը Ձեր գլխավորած «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հյութատանը:

Մեր ասպետների հիացմունքը ընդունելության և անձամբ Ձեր ջերմ վերաբերմունքի հանդեպ վկայում են ու հաստատում, որ, իրոք, մենք Հայաստանում հյուրընկալ ու մեծ տուն ունենք և հանձինս Ձեզ՝ մեծ բարեկամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ համաձայն ձեռք բերված պայմանավորվածության ԼՂՀ ԿԳ նախարարության 6 հոգանոց պատվիրակությունը, նախարարության աշխատակազմի ղեկավար է.Գրիգորյանի գլխավորությամբ, մասնակցելու են ս.թ. սեպտեմբերի 27-29-ը կրթահամալիրում կազմակերպվող ստեղծագործական հավաքին:

Ս.Ասրյան